ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԻԺԸ ԵՎ ՆՐԱ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Զ. Ա. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Մեր երկրում կոմունիզմի կառուցումը պայմանավորում է սոցիալիստական պետության և իրավունքի դերի օրինաչափ բարձրացումը հանցագործությունների վերացման գործում։ Վերջին ժամանակներս սահմանվել է ավելի խիստ պատասխանատվություն որոշ իրավախախտումների համար[1]։ Բարելավվել է միլիցիայի, դատախազության և դատարանների գործունեությունը[2]։ Ինչպես նշեց Լ. Ի. Բրեժնևը ՍՄԿԿ XXIV համագումարում, «Օրենքներով նախատեսված պատժամիջոցներ կիրառելու հետ մեկտեղ մեզանում ավելի ու ավելի մեծ հոգատարություն է ցուցաբերվում հանցագործությունների պրոֆիլակտիկայի, դրանք կանխելու և թույլ չտալու նկատմամբ»[3]։ Այդ խնդրի լուծման կարևոր միջոցներից մեկն է իրավական նորմայի և հատկապես քրեական պատժի արդյունավետության որոշման տեսական մշակումը[4]։

Մինչև այժմ սովետական իրավագիտության մեջ չկա միասնական կարծիք քրեական պատժի արդյունավետության մասին։

Ըստ Մ. Շարգորոդսկու «արդյունավետությունը վերացական հասկացություն է, որը ցույց է տալիս օգտագործվող միջոցի հնարավորությունը ցանկալի նպատակին հասնելուն օգնելու գործում»[5]։ Թվում է, որ պատժի արդյունավետությունը վերացական հասկացություն չէ, այլ իրական՝ կապված իրականության և դատարանի կողմից կիրառվող պատժի օգտակարության հետ[6]։

Քրեական պատժի արդյունավետությունը օրենսդրի կողմից դատարանի միջոցով նշանակվող քրեական պատժի առջև դրված վերջնական նպատակին հասնելն է[7]։ Այս տեսակետն ավելի ճիշտ է արտահայտում պատժի արդյունա-

---

1 *Տե՛ս ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1966 թ. հուլիսի 26-ի հրամանագիրը «Խուլիգանության համար ավելի խստիվ պատասխանատվության մասին»*, «Ведомости Верховного Совета СССР», 1966, № 30.

2 *Տե՛ս Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXIV համագումարին, Երևան, 1971, էջ 126։*

3 *Նույն տեղում, էջ 126—127։*

4 М. Д. Шаргородский, Система наказаний и их эффективность, «Советское государство и право», 1968, № 11, стр. 53—61; В. Н. Никитинский, Эффективность норм трудового права. М., 1971, стр. II—34.

5 М. Д. Шаргородский, *Նշվ. աշխ., էջ 54։*

6 *Նման պատճառաբանությամբ Մ. Դ. Շարգորոդսկու տեսակետը քննադատում է Վ. Ն. Նիկիտինսկին (տե՛ս* В. Н. Никитинский, *նշվ. աշխ., էջ 12)։*

7 *Տե՛ս* И. М. Гальперин, Роль наказания при социальных изменениях, «Советское государство и право», 1972, № 3, стр. 118; Г. А. Злобин, О методологии изучения эффективности уголовного наказания в советском уголовном праве и криминологии, Вопросы предупреждения преступности, 1965, вып. 1, стр. 16, А. Е. Наташев, Н. А. Стручков. Основы теории исправительно-трудового права, М., 1967, стр. 164, Б. С. Никифоров, Эффективность уголовно-правовых мер борьбы с преступностью, М., 1968, стр. 4—5, И. В. Шмаров, Исправительно-трудовое право, М., 1966, стр. 62.

վետության էությունը և համապատասխանում է ՍՍՀ Միության և միութենական հանրապետությունների քրեական օրենսդրության հիմունքների 20-րդ հոդվածին, ըստ որի «պատիժը.... նպատակ ունի դատապարտվածներին ուղղելու և վերադաստիարակելու աշխատանքին ազնվորեն վերաբերվելու, օրենքները ճշտորեն կատարելու, սոցիալիստական համակեցության կանոնները հարգելու ոգով, ինչպես նաև կանխել նոր հանցագործությունների կատարումը, ինչպես դատապարտվածների, այնպես էլ այլ անձանց կողմից»։

Քրեական իրավունքի տեսության կարևորագույն հարցերից է պատժի արդյունավետության բացահայտումը։ Ինչպես նշված է կուսակցության ծրագրում՝ «դեռ կան հանցագործությունների դրսևորումներ, անհրաժեշտ է խիստ պատժամիջոցներ կիրառել այն անձանց նկատմամբ, ովքեր կատարում են հասարակության համար վտանգավոր հանցանքներ, խախտում են սոցիալիստական համակեցության կանոնները, չեն ցանկանում մասնակցել ազնիվ աշխատանքային կյանքին։ Գլխավոր ուշադրությունը պետք է ուղղվի հանցագործությունների կանխմանը»[8]։

Այդ կարևորագույն խնդիրների իրականացման գործում մեծ դեր ունեն քրեական իրավունքի գիտությունն ու քրեաբանությունը, որոնց ուսումնասիրության հիմնական հարցերից մեկն այն իրավանորմերի արդյունավետությունն է, որ կիրառվում է հանցագործության դեմ պայքար մղելու համար։ Հանցագործության դեմ պայքարող հիմնական իրավական նորմը դատարանի կողմից նշանակված քրեական պատիժն է, որի վերջնական արդյունավետությունը կախված է պատժի նշանակման և ճիշտ կիրառման լուծումից։

Քրեական պատժի արդյունավետության բացահայտումը անհնար է առանց տվյալ պայմաններում նրա կիրառման անհրաժեշտության և ոչ անհրաժեշտության բացահայտման, որովհետև պատժի տեսակը և չափը չի կարելի համարել արդյունավետ, եթե հնարավոր է հասնել պատժի առջև դրված նպատակների վերջնական լուծմանը՝ իրավախախտի նկատմամբ ներգործության այլ միջոցներ կիրառելով։ Յուրաքանչյուր գործի լուծման ընթացքում դատարանները պետք է քննեն այն հարցը, թե արդյոք հնարավոր չէ հանցագործի հետագա դաստիարակությունը կազմակերպել առանց քրեական պատժի, այլ դաստիարակչական միջոցներով կամ կիրառել այնպիսի քրեական պատիժ, որով չի ազատազրկվում անձը։ Պետք է խստիվ անհատականացնել նշանակվող պատժի տեսակը և չափը, ելնելով իրավախախտողի հանրության համար վտանգավոր արարքից։

Հանցագործի ուղղվելն ու վերադաստիարակվելը նշանակում են, որ նրա մոտ առաջ են եկել առողջ հայացքներ, համոզմունքներ։ Պատիժը ոչ միայն ուղղում և վերադաստիարակում է դատապարտյալին, այսինքն իրականացնում է պատժի հատուկ նախազգուշական կողմը, այլև ազդում է մեր հասարակության որոշ անդամների վրա, որպեսզի նրանք ևս չկատարեն հանրորեն վտանգավոր արարքներ, դրանով իսկ այն հասնում է պատժի ընդհանուր նախազգուշական կողմի իրականացմանը։

Պատժի հատուկ նախազգուշական կողմի դրական արդյունքի գնահատման ժամանակ սխալ կլիներ նախկինում դատապարտվածի նոր հանցանք կատարելը համարել նախկինում նշանակված պատժի անարդյունավետության

8 ՍՄԿԿ ծրագիրը և կանոնադրությունը, Երևան, 1964, էջ 129։

չափանիշ, քանի որ, չնայած ուղղիչ-աշխատանքային ներգործության արդյունավետությանը, տվյալ անձին պատժելուց հետո էլ երբեմն նրան նայում են կասկածանքով ու անվստահությամբ և նա նորից է կանգնում հանցավոր ճանապարհի վրա[9]։

Ինչ վերաբերում է պատժի ընդհանուր նախազգուշական կողմին, ապա սովետական քրեական իրավունքի տեսության մեջ այն դեռևս վերջնական լուծում չի գտել։ Վերոհիշյալի լուծմամբ հնարավորություն կստեղծվի ավելի ճիշտ բացահայտելու քրեական պատժի արդյունավետությունը հանցագործության կանխման գործում։

Քրեական պատժի ընդհանուր նախազգուշական կողմը իրացվում է հետևյալ միջոցներով. քրեական օրենքի առկայություն, քրեական պատժի կիրառում հանցագործություն կատարելու դեպքում, դատարանի կողմից հանցագործի նկատմամբ քրեական պատժի նշանակում և անթերի կատարում։ Վերջին դեպքում կոնկրետ անձի նկատմամբ նշանակված քրեական պատիժը ազդում է նաև բոլոր այն անձանց վրա, որոնք կարող են դառնալ քրեական իրավահարաբերության սուբյեկտներ։ Պատժի ընդհանուր նախազգուշական կողմի լուծման համար կարևոր նշանակություն ունի անձանց այն քանակի որոշումը, որոնց վարքի վրա քրեական պատժի կիրառումը ազդում է։ Սովետական քրեագիտության մեջ չկա միասնական կարծիք այն մասին, թե ինչ քանակի անձանց վրա է ազդում պատժի ընդհանուր նախազգուշական կողմը։ Ն. Բելյաևը գտնում է, որ այն ներգործում է սովետական քաղաքացիների աննշան քանակության վրա[10], Ի. Նոյի[11] և Ա. Եֆիմովի[12] կարծիքով՝ պատժի ընդհանուր նախազգուշական կողմը առաջին հերթին ներգործում է մեր հասարակության անկայուն տարրերի վրա, իսկ Ա. Սախարովը պնդում է, որ այն ներգործում է ոչ քիչ թվով սովետական քաղաքացիների վրա[13]։

Ավելի հավանական է Ա. Սախարովի կարծիքը, քանի որ մեր հասարակության մեջ կան մարդիկ, որոնք դեռևս ունեն մասնավոր սեփականատիրական, շահադիտական ձգտումներ, ցանկանում են ապրել ուրիշների հաշվին։ Այդ ամենը, իհարկե, հակասում են սոցիալիստական իրավունքի և բարոյականության ոգուն, մեր հասարակության ավելի արագ առաջընթացին և հանցագործությունների խսպառ վերացմանը։

Ինչպես նշեց Լ. Ի. Բրեժնևը ՍՄԿԿ XXIV համագումարում «Չի կարող կոմունիստական բարոյականության հաղթանակ լինել, առանց վճռական պայ-

---

9 Տե՛ս Ф. Т. Кузнецов, П. Е. Подимов, И. В. Шмаров, Эффективность деятельности исправительно-трудовых учреждений. М., 1968, стр. 68—77. И. В. Шмаров, Критерий и показатели эффективности наказаний. «Советское государство и право», 1968. № 6, стр. 58.

10 Н. А. Беляев, Цели наказания и средства их достижения в исправительно-трудовых учреждениях, Л., 1963, стр. 5.

11 И. С. Ной, Вопросы теории наказания в советском уголовном праве, Саратов, 1962, стр. 76.

12 М. А. Ефимов, Лишение свободы как вид уголовного наказания (сборник ученых трудов свердловского юридического института, Свердловск, вып. 1, 1964, стр. 202).

13 А. Б. Сахаров, О личности преступника и причинах преступности в СССР, М., 1961, стр. 251.

քար մղելու նրա այնպիսի հակապատկերների դեմ. ինչպիսիք են շահամոլությունը, կաշառակերությունը, պորտաբուծությունը, զրպարտությունը, անստորագիր նամակները, հարբեցողությունը և այլն։ Պայքարն այն բանի դեմ, ինչը մենք անվանում ենք անցյալի մնացուկներ մարդկանց գիտակցության և արարքների մեջ, այնպիսի գործ է, որ պահանջում է կուսակցության, մեր հասարակության բոլոր առաջավոր գիտակից ուժերի մշտական ուշադրությունը»[14]։

Քրեական պատժի արդյունավետությունը ուսումնասիրելիս կարևոր նշանակություն ունի նաև հանցագործության ռեցիդիվի հարցի քննարկումը։ Ռեցիդիվ հանցագործությունը ցույց է տալիս, որ պատիժը եղել է անարդյունավետ կամ քիչ արդյունավետ, իհարկե, եթե պատժից աղատվածը գտնվել է բավարար պայմաններում։

Քրեական պատժի արդյունավետության ավելի խոր պարզաբանման համար անհրաժեշտ է բնորոշել քրեական պատժի արդյունավետության չափանիշները։ Սովետական քրեական իրավունքի տեսության մեջ միասնական կարծիք չկա նաև պատժի արդյունավետության չափանիշների բնորոշման հարցում։ Ըստ Բ. Նիկիֆորովի՝ պատժի արդյունավետության չափանիշն է «պատժի կիրառման հետևանքով երեկվա հանցագործի վերափոխվելը օրինակելի քաղաքացու»[15]։

Ճիշտ է Ի. Շմարովի տեսակետը, ըստ որի քրեական պատժի արդյունավետության չափանիշը այն որակի ցուցանիշին և պատժի նպատակներին ձգտելն է, որին պետք է հասնի նշանակված քրեական պատիժը[16]։

Խնդիրն այստեղ այն կոնկրետ և հստակ չափանիշների սահմանումն է, որոնցով պետք է ղեկավարվել քրեական պատժի արդյունավետության կամ անարդյունավետության աստիճանի հարցը պարզաբանելիս։

Դատապարտյալի ուղղման և վերադաստիարակման չափանիշ պետք է համարել նրա վարքը և աշխատանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքը, ինչպես պատիժը կրելու ժամանակ, այնպես էլ հետո։

ՍՄԿԿ ծրագրում ասված է. «Սոցիալիզմի պայմաններում աշխատանքային ուղուց շեղված յուրաքանչյուր մարդ կարող է վերադառնալ օգտակար գործունեության»[17]։ Հատկապես դրանից է ելնում օրենքը, որը պատժի նպատակների մեջ է մտցրել դատապարտյալին ուղղելն ու աշխատանքի նկատմամբ ազնիվ վերաբերմունք տածելը, օրենքների ճիշտ կատարման և սոցիալիստական համակեցության կանոնների պահպանման ոգով դաստիարակելը։

Դատապարտյալի ուղղման և վերադաստիարակման չափանիշ պետք է համարել նրա վարքը և աշխատանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքը պատիժը կրելուց հետո։ Հետևաբար՝ պատժի արդյունավետության որոշման համար նշված հանգամանքը ունի վճռական նշանակություն։ Նշված գործոնները որոշիչ նշանակություն են ձեռք բերում դատվածության վաղակետ

---

14 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXIV համագումարին, Երևան, 1971, էջ 132։

15 Эффективность уголовно-правовых мер борьбы с преступностью, М., 1968, стр. 8.

16 И. В. Шмароа, Критерии и показатели эффективности наказаний, «Советское государство и право», 1968, № 6, стр. 59—60.

17 ՍՄԿԿ ծրագիրը և կանոնագրությունը, էջ 129։

մարման համար, քանի որ պատիժը կրելուց հետո է, որ դատապարտվածներն ապացուցում են իրենց ուղղված և վերադաստիարակված լինելը։ Հենց այս միտքն է արտահայտված ՀՍՍՀ քրեական օրենսգրքի 52-րդ հոդվածում։ «Եթե աղատազրկման դատապարտվածը պատիժը կրելուց հետո օրինակելի վարքով և աշխատանքի նկատմամբ ազնիվ վերաբերմունքով ապացուցել է իր ուղղված լինելը, ապա հասարակական կազմակերպությունների միջնորդությամբ դատարանը կարող է նրա դատվածությունը վերացնել նախքան այս հոդվածում նշված ժամկետների լրանալը»։

Ի. Շմարովը դրում է. «դատապարտյալի դրական վարքը պատիժը կրելու ժամանակ չի կարող համարվել ուղղվելու և վերադաստիարակվելու չափանիշ»[18]։ Այս միտքը համոզեցուցիչ չէ, քանի որ կալանավայրի վարչությունը դատապարտյալի վերաբերյալ դրական բնութագիրը ներկայացնում է դատարան նրան վաղակետ աղատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու համար, հաշվի առնելով նրա դրական վարքը միայն պատիժը կրելու ընթացքում։ Դատապարտյալի դրական վարքը և աշխատանքի նկատմամբ ունեցած բարեխիղճ վերաբերմունքը պատիժը կրելու ժամանակ հիմք են նրա ուղղված և վերադաստիարակված լինելու մասին և, հետևաբար, նրան վաղակետ աղատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու։ Այստեղ, իհարկե, կալանավայրի վարչությունը և համապատասխան իրավասու մարմինները պարտավոր են ուշադիր ուսումնասիրելու դատապարտվածի վարքը, որպեսզի չուղղվածները վաղակետ չազատվեն։ Պատիժը կրելու ժամանակ դատապարտյալի ուղղված լինելը կարող է ապացուցվել նրա կարգապահությամբ, աշխատասիրությամբ, ուղղիչ աշխատանքային հիմնարկի հասարակական կյանքին ակտիվ մասնակցությամբ, աշխատանքի նկատմամբ ազնիվ վերաբերմունքով, աշխատանքային պլանների անթերի և ժամանակին կատարմամբ, անկեղծությամբ և այլն։

Քրեական պատժի արդյունավետության հաջորդ չափանիշն է հանցագործության ռեցիդիվի բացակայությունը, որը հիմնականում բխում է պատժի հատուկ նախազգուշական կողմի հասկացության բովանդակությունից, որպես նոր հանցագործություն դատապարտյալի կողմից պատիժը կրելու ժամանակ և հետո։

Ռեցիդիվ հանցագործության առկայությունը պատիժը կրողների և արդեն աղատվածների շրջանում բացատրվում է երբեմն տարբեր պատճառներով։ Այսպես, օրինակ, ազատազրկվածների շրջանում այն բացատրվում է ուղղիչ աշխատանքային գաղութներում տարվող դաստիարակչական աշխատանքի ոչ բավարար մակարդակով, կալանավայրի վարչության կողմից դատապարտյալի նկատմամբ ունեցած ոչ անհատական վերաբերմունքով, ուրիշ դատապարտյալների բացասական ազդեցությամբ, պատժի ռեժիմին ոչ պատշաճ հետևելու և բազմաթիվ այլ պատճառներով։ Ռեցիդիվ հանցագործությունը արդեն պատժից ազատվածների շրջանում բացատրվում է նրանց նկատմամբ հասարակական հսկողության վատ կազմակերպումով, շրջապատի անվստահության, աշխատանքային, կենցաղային պայմաններով և այլն։

---

[18] И. В. Шмаров, Критерии и показатели эффективности наказаний, «Советское государство и право», 1969, № 6, стр. 60.

Ոչ ազատազրկման դատապարտվածների շրջանում ռեցիդիվ հանցագործությունը բացատրվում է նրանց նկատմամբ տարվող դաստիարակչական աշխատանքի անբավարար մակարդակով, հանցագործության համար ավելի մեղմ պատիժ նշանակելով կամ նախկինում ազատազրկվածի նկատմամբ նոր համանման հանցագործության դեպքում այնպիսի պատիժ նշանակելով, որ կապված չէ ազատազրկման հետ և այլ պատճառներով։

Քրեական պատժի արդյունավետության ընդհանուր նախազգուշական կողմը, որը ներգործում է մեր հասարակության որոշ անդամների վրա, սովետական քրեական իրավունքի տեսության մեջ մինչև այժմ բավարար չի լուսաբանվել։ Պատժի ընդհանուր նախազգուշական կողմի հիման վրա կարելի է որոշել, թե ինչպիսի հոգեբանական ներգործություն է ունենում քրեական պատիժը այն քաղաքացիների վրա, որոնք կարող են դառնալ քրեական պատասխանատվության սուբյեկտներ։

Գ. Զլոբինը նշում է, որ քրեական պատժի ներգործության ընդհանուր նախազգուշական կողմի չափանիշներ կարող են հանդիսանալ նախորդ փորձի հիման վրա նույնանման պատիժների սահմանումը և կիրառումը համանման հանցագործությունների համար, հանցագործության շարժառիթի վրա նոր քրեական օրենքի ներգործության ուսումնասիրությունը տևական ժամանակաշրջանի ընդգրկումով (առնվազն մի քանի տարի), սահմանված պատժի գնահատականը հասարակական կարծիքով[19]։ Ավելի ճիշտ կլիներ Գ. Զլոբինի տված չափանիշներին ավելացնել դատական, դատախազական մարմիններում երկար տարիների ընթացքում ստեղծված կարծիքը։

Այսպիսով՝ քրեական պատժի արդյունավետության չափանիշներ կարելի է համարել դատապարտյալի դրական վարքը և աշխատանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքը քրեական պատիժը կրելու ընթացքում և հետո, ռեցիդիվ հանցագործության բացակայությունը, նախորդ փորձի հիման վրա համանման հանցագործությունների համար նույնանման պատիժների սահմանումը և կիրառումը, հանցագործության շարժի վրա նոր քրեական օրենքի ներգործության ուսումնասիրությունը տևական ժամանակաշրջանի ընդգրկումով (առնվազն մի քանի տարի), սահմանված պատժի հասարակական գնահատականը, տարիների ընթացքում դատական, դատախազական, օրենքը կիրառող և կատարող մարմիններում ստեղծված կարծիքը։

Նշված չափանիշներից մի քանիսը, իհարկե, գտել են իրենց բավարար լուսաբանումը և պարզաբանումը իրավագիտության մեջ, մյուսները՝ համեմատաբար քիչ։

Քրեական պատժի արդյունավետության խոր, բազմակողմանի ուսումնասիրությունը և այդ հիման վրա նրա չափանիշների հստակ որոշումը խոշոր ու դրական դեր կարող է խաղալ հանցագործության դեմ պայքար մղող մարմինների առջև դրված խնդիրների հաջող լուծման գործում։

---

[19] Г. А. Злобин, նշվ. աշխ., էջ 64։

УГОЛОВНОЕ НАКАЗАНИЕ И ЕГО ЭФФЕКТИВНОСТЬ

З. А. ТАДЕВОСЯН

Резюме

В последнее время в юридической науке разрабатываются проблемы определения эффективности правовых норм вообще и эффективности уголовного наказания в особенности.

У советских криминалистов имеются разные точки зрения по определению эффективности уголовного наказания. Мы согласны с теми авторами, которые под эффективностью уголовного наказания понимают как достижения целей, которые поставлены законодателем перед уголовным наказанием.

Для эффективности уголовного наказания большое значение имеет правильное назначение вида и меры наказания, т. к. назначенное судом наказание не должно считаться эффективным без решения вопросов, относящихся к целесообразности его применения в конкретных условиях и на конкретных лиц.

Вместе с вышесказанным немаловажное значение имеет и безошибочное, с точки зрения закона, исполнение назначенного уголовного наказания.